ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 Ն.
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IE24-3C19-485D-B5BB հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

ԵԴ2/3672/02/26

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

07 ապրիլի 2026թ.
ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի **դատավոր Գ. Վարդանյանս**, քննության առնելով «Աշիկյան գրուպ» ՍՊ ընկերությունն ընդդեմ «ՀՀ Արարատի մարզի Արալեզի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի՝ «Աշիկյան գրուպ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ 12.01.2026թ. որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«Աշիկյան գրուպ» ՍՊ ընկերության ներկայացուցիչը 2026թ. ապրիլի 2-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ «ՀՀ Արարատի մարզի Արալեզի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի՝ «Աշիկյան գրուպ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ 12.01.2026թ. որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Էլեկտրոնային եղանակով վարվող գործը մակագրվել է դատավոր Գ. Վարդանյանին 2026թ. ապրիլի 3-ին, իսկ Դատավորին հասանելի է դարձել 2026թ. ապրիլի 6-ին:

Հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121 և 122 հոդվածների պահանջներին համապատասխան և նույն օրենսգրքի 126 և 127 հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124, 125, 127, 199-200, 234.5 և 234.6 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Աշիկյան գրուպ» ՍՊ ընկերությունն ընդդեմ «ՀՀ Արարատի մարզի Արալեզի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի՝ «Աշիկյան գրուպ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ 12.01.2026թ. որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումն ընդունել վարույթ:

Թիվ ԵԴ2/3672/02/26 քաղաքացիական գործով կայացվող եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2026թ. ապրիլի 30-ին՝ դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Գրիգորի Վարդանյան

Digitally signed by VARDANYAN GRIGORI 1507850611
Date: 2026.04.07 10:29:12 AMT

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am